

## ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2016թ. ապրիլի 28-ի

նիստի /արձ. 11/

1. «ԵԹԿՊԻ-ում ուսումնական գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպման կարգ»-ի 4-րդ գլխի 2-րդ ենթագլխում ավելացնել 2.3 կետը հետևյալ բովանդակությամբ.  
«Լուծարքային շրջանը (երկու փուլերով) կազմակերպել յուրաքանչյուր կիսամյակի առաջին երեք շաբաթների ընթացքում»,
  - 1.1 սույն որոշման իրավաբանական ձևակերպումը հանձնարարել իրավախորհրդատու Է. Մանասերյանին:
2. Հաստատել մագիստրատուրայի կրթական ծրագրով Կատարողական արվեստ մասնագիտության 021502.03.7 Պարարվեստ մասնագիտական կրթական ծրագրի ուսումնական պլանը:
3. Հաստատել ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. ապրիլի 27 -ի նիստի որոշումը և մագիստրատուրայի 2016-2017 ուս. տարվա ընդունելության համար ուսման վարձաչափերը թողնել անփոփոխ:
4. Արձանագրել, որ պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է սահմանված կարգով և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,
  - 4.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,
  - 4.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 6-րդ կետի գ) ենթակետի համաձայն ձայների մեծամասնությամբ (25 կողմ, 3 դեմ) պրոֆեսորի գիտական կոչում շնորհել դոցենտ Արմեն Համբիկի Խաչատրյանին ԺԷ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՂ-ին հաստատելու գիտական խորհրդի որոշումը:

5. Գիտական խորհրդին կից Որակի ապահովման հանձնաժողովի կազմը քննարկել  
ռեկտորատի նիստում և ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան